

ժամանակ զանիկայ կը դարձնէ, ու դրսի մաքուր օդը ներս կը մտնէ. աւելի աղէկ կ'ըլլայ՝ թէ որ աս գործիքը երկու հատ ըլլայ, մէկը բնակարանին յատակին մօտ՝ մէկալը աւելի բարձրերը, որ աւելի աղէկ կը բանի:

Այսպէս օդէն առաջ եկած սոսկալի դիպուածներու մէկ օրինակն ալ աս ըլլայ: Արջի ատեններս 145 հոգի իրիկուան դէմ բանտ մը դրուեցան որ 18 ոտք լայն ու 18 ոտք երկայն տեղ մըն էր. և միայն երկաթապատ պատուհանէ մը օդ կ'առնէին. կէս գիշերուն օդին ապականութենէն աս խեղճերը սոսկալի ցաւեր ու խոստովներ զգալով՝ սաստիկ կանչուրուտէին ետեւ, բոլորովին լռեցին. առաւօտը ժամը վեցին բանտին դուռը բանալնուն պէս՝ քսանուիրեք հոգիէն զատ մէկալնոնք ամէնքը մեռած դտան. բայց մնացողներուն շատն ալ փտտած ջերմէ բռնուեր էին:

Այսպէս ջերմը, փտտած հոտած բոյսերն ու կենդանիներն ալ օդը շատ կ'ապականեն. անոր համար ան երկիրներն որ անշարժ լճեր շատ կան՝ հոն տեղուանքի օդն ալ առողջ չկրնար ըլլալ:

Ըստ վտանգաւոր բան է նաեւ գիշեր ատեն պառկելու սենեկին մէջ բոյս պահելը, վասն զի անոնք ալ օդին կենդանական մասը ծծելով՝ ածխային կազը կ'արտաշնչեն, որ մարդու շատ վնասակար է:

Հ. Օ. ԳՈՒՐԳ:

ԽԵԼԱՑԻ ԽՕՍՔԵՐ

Քանի ի՞նչ հարկաւոր հարցմանք ու պատասխաններ:

Ի՞նչ է պարսաւագէտ քննութիւնը (գրիթի+ան):
— Խելացի մարդու յատուկ սեպուած դատաստան, չորասրտի զուարճութիւն, նախանձոտի պատրուակ, անխելքի բարակութիւն, հանճարեղին պատուհաս:

Ի՞նչ է չարախօսը:

— Մարդ մը որ խօսքին ամէնքը մտիկ կ'ընեն, ամէնքը կը հաւատան, ու զինքն ամէնքը կ'ատեն:

Ի՞նչ է յուսահատութիւնը:

— Վատ մարդուն մէկ հատիկ քաջութիւնն է:

Ի՞նչ է անշահախորութիւնը:

— Առաքինութիւն մը որ խիստ քիչ կը գտնուի. այնպէս որ եթէ յանկարծ մէկուն վրայ երևնայ՝ առջի բերանը կամ կեղծաւորութիւն կը կարծուի կամ վատութիւն:

Ի՞նչ է խնայութիւնը:

— Շուայութեան ու աղահոգութեան մէջտեղը առաքինութիւն մըն է, որ սովորաբար երկրորդին աւելի կը մօտենայ:

Ի՞նչ է աներեսութիւնը:

— Տեսակ մը յանգչեցութիւն՝ որ երբեմն գործունէութիւն ու խելացութիւն կը կարծուի:

Ի՞նչ է նախանձը:

— Վտանգաւոր ջերմ մը՝ որուն պատճառը ուրիշին աղէկութիւնն է:

Ի՞նչ է ծանծաղամտութիւնը:

— Եւղ բերնով ապակի, որ որչափ քիչ բան կայ մէջը՝ այնչափ աւելի ձայն կը հանէ պարպելու ատենդ:

Ի՞նչ է ուսումը:

— Ամէն ատենի զուարճութիւն, ամէն տեղի օգնութիւն, ամէն տեսակ չարեաց դէպ:

Ա Ռ Ա Կ

ՄԵՐԻՆԻՆ ԴՊՊԱՍԻՏԵՐ:

ՄԵՐԻՆԻՆ մը կար բարակիկ,
Մէջքը թելիկ՝ ոտքը կարճիկ,
Չիյտեմ խելքին ի՞նչ փրէյց,
Խիստ բարձրէն քալել ուզեյց.
Վազեյց վազեյց հեալէն
Ելաւ ինչուան մինարէն.
Վերէն վար որ նայեցաւ,
Ծօ անոնք ի՞նչ են ըսաւ.
Հոգի, այն ձին չէ՞ մի սա
Որ երեկ դաշտը տեսայ.
Չըսէս, ես կոյր եմ եղեր
Որ մէկ պահ առաջ խաբուեր
Ու ատանկ խեղճ՝ ճըճիներն
Մէյմէկ հըսկայ եմ կարծեր:

Աս մըջինին չըմանիր
Ան տեսակ մատենագիր,
Որ երեկ մէկ այսօր երկուք՝
Չորս տող բան գրէ պաղուկ պաղուկ
Ու ետքը մեծ մեծ ջարդելով,
Ուրիշներու վրայ խնայալով,
Խորեհացին, Ոսկեբերան
Իրեն աչքին բան չերեան: